



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍՍԱՐԼԵԱ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Tigran Mea, 59, Vanadzor
Republic of Armenia
Tel. (hba) (374 322) 4 22 68
E-mail hca.vanadzor.am

16-264
16 հոկտեմբեր 2009 թ.

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանին

Դիմումատու – «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» հասարակական
կազմակերպություն պետական ռեգիստր 03 Ա 070486
ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Պատասխանող – ՀՀ Լոռու մարզի դատախազություն
2001, Վանաձոր, Մյասնիկյան 13

Դ Ի մ ու մ

(Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի դատախազությանը քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու պարտադրելու պահանջի մասին)

2009 թ. օգոստոսի 21-ին իր իրավունքների պաշտպանության համար մեր կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի Մ. Խորենացու 10/17 հասցեի բնակչուհի Շուշանիկ Մկրտիչի Սարգսյանը:

Ըստ Շուշանիկ Սարգսյանի՝ սեփականություն իրավունքով իերն պատկանող Մ. Խորենացու 10/17 հասցեի բնակարանը, անօրինական խուզարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժանմունքի քննիչ Վ. Դովմազյանի և ոստիկանության երեք աշխատակիցների կողմից:

2009 թ. օգոստոսի 21-ին Շուշանիկ Սարգսյանը դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի՝ ստանալու ստորև նշված հարցերի պատասխանները՝

1. որո՞նք են քննիչի կողմից բավարար կամ ենթադրություններ հարուցող հիմքերը (ՀՀ քր. դատ. օր 225 հդ.), որ իմ բնակարանում կամ իմ մոտ գտնվել են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ թիվ 19115009 գործի համար:
2. ո՞րն է թիվ 19115009 քրեական գործով իմ կարգավիճակը
3. ու՞մ նկատմամբ է հարուցված թիվ 19115009 քրեական գործը և ի՞նչ մեղադրանք է առաջադրված տվյալ գործով մեղադրյալին:

2009թ. օգոստոսի 24-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի կողմից ստացվել է պատասխան գրություն, որով հայտնվել է, որ նրա բնակարանում խուզարկություն չի կատարվել:

2009թ. օգոստոսի 26-ին Հելսինկի Թեմանի Սաքանյանը, Վերա Մարիկյանը, Գայանե Պողոսյանը և Դ. Մ. Մանուկյանը մեր կազմակերպություն դիմումներ են ներկայացրել այն մասին, որ օգոստոսի 13-ին Վ. Դովմազյանի կողմից խուզարկություն է կատարվել Շուշանիկ Սարգսյանի Մ. Խորենացու 10/17 հասցեի բնակարանում:

16.11.09

2009թ. օգոստոսի 27-ին մեր կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ստանալու Մ. Խորենացու 10/17 հասցեի բնակարանի խուզարկության քույտվության դատարանի որոշման պատճենը:

2009թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար Ժ. Ալյանզյանի պատասխան գրությամբ հայտնել է՝ որ Մ. Խորենացու 10/17 բնակարանում խուզարկություն կատարելու քույտվության մասին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում չի կայացրել:

2009 թ. օգոստոսի 29-ի Վ. Դովմազյանի կողմից պաշտոնական դիրքի շարաշահման մասին կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որը 2009թ. սեպտեմբերի 12-ի մակագրվել է Լոռու մարզի դատախազություն:

Լոռու մարզի դատախազությունը օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում չի կայացրել և դրա պատճենը չի ներկայացրել հանցագործության մասին հաղորդում ներկայացրած իրավաբանական անձին:

Գտնում են, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի դատախազությունը պետք է պարտավորեցնել որոշում կայացնել քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետևյալ պատճառաբանությամբ և հիմքերով:

Լոռու մարզի դատախազությունը պատասխան էր քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնել:

2009 թ. օգոստոսի 29-ի Վ. Դովմազյանի կողմից պաշտոնական դիրքի շարաշահման մասին կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որը հետագայում մակագրվել է ՀՀ Լոռու մարզի դատախազություն:

2009թվականի սեպտեմբերի 12-ին Գլխավոր դատախազությունը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ դիմումն ուղարկել է Լոռու մարզի դատախազություն:

2009թ. սեպտեմբերի 18-ին ՀՀ Լոռու մարզի դատախազության կողմից ստացվել է քիվ Պ-458-09 գրությունը, որում անդրադարձել է խուզարկության իրականացման օրինականության կամ անօրինականության հիմքերին, սակայն օրենքով սահմանված կարգով որոշում չի կայացրել և չի տրամադրել:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածում հստակ նշված է՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) քրեական գործ հարուցելու մասին., 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին., 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու մասին: Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն կայացրած որոշման պատճենը դատախազը պարտավոր է ուղարկել հանցագործության մասին հաղորդած իրավաբանական կամ ֆիզիկական անձին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը կարգավորում է նաև հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու և տեղեկատվության տրամադրման կարգն այն դեպքում, երբ մերժվում է քրեական գործի հարուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Նույն հոդվածի 2-ին մասի համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

Վերը շարադրվածից երևում է, որ երկու դեպքում էլ 1)քրեական գործ հարուցելու կամ 2)քրեական գործի հարուցումը մերժելու ժամանակ օրենսդիրը պարտադիր է համարել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը և դրա պատճենը հաղորդում ներկայացրած ֆիզիկական և իրավաբանական անձին տամադրելը:

ՀՀ դատախազության մասին օրենքի 30-րդ հոդված համաձայն՝ «.....դատախազն ընդունում է որոշում, արձակում հրաման կամ կարգադրություն, ներկայացնում միջնորդագիր, տալիս ցուցում»:

